

Հարկային տեղեկագիր

Հարկային օրենսդրությունում կատարված փոփոխություններ և լրացումներ

**Գրանթ Թորնթոն Լիգալ ընդ Թաքս
ՄՊԸ**

Մույն տեղեկագրի նպատակն է հակիրճ ներկայացնել ՀՀ հարկային օրենսդրությունում կատարված որոշ փոփոխությունների և լրացումների հիմնական դրույթները, որոնք գործում են 2018թ. հունվարի 1-ից



Ավելացված արժեքի հարկ

Ավելացված արժեքի հարկ

Փոփոխությունն ավելացված արժեքի հարկի հաշվետու ժամանակաշրջանում

Ի տարբերություն մինչև 2018թ. հունվար 1-ը գործող կարգի, ըստ որի ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ «ԱԱՀ») հաշվարկման և վճարման հաշվետու ժամանակաշրջան էր համարվում ամիսը կամ եռամսյակը՝ պայմանավորված հարկ վճարողի ԱԱՀ-ով հարկվող գործարքներից ստացված հասույթի մեծությունից, ներկայումս ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:



Փոխհատուցվող ԱԱՀ գումարի վերադարձ

Եթե յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ վճարողն ունի ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարն ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում ենթակա է մուտքագրման վերջինիս միասնական հաշվին:

ՀՀ հարկային օրենսգրքով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը բնորոշվում է որպես հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի և սահմանված կարգով հաշվանցվող (պակասեցվող) ԱԱՀ-ի գումարների բացասական տարբերություն:

Հարկ է նշել, որ նախկինում գործող օրենսդրության համաձայն՝ ենթակա էր վերադարձման միայն ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները: Ընդ որում սույն դրույթը կիրառելի է 2017թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների համար ներկայացված ԱԱՀ հաշվարկներով առաջացած ԱԱՀ փոխհատուցվող գումարների համար ևս:


Շահութահարկ

Շահութահարկ

Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների շահաբաժինների հարկման նոր մեխանիզմի ներդրում

Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարման ենթակա շահաբաժինների գծով աղբյուրի մոտ շահութահարկի հաշվարկման պարտավորությունը հարկային գործակալի համար ծագում է, իսկ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար շահաբաժինների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռքբերված հարկային գործակալի բաժնետերերի (փայտատերերի) ժողովի կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը:

Հարկ է նշել, որ սույն դրույթը կիրառելի է միայն 2017թ. հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող շահաբաժինների համար:



Շահութահարկ

Վերադարձ մաշվածության հաշվարկման գծային մեթոդին

Եթե նախկինում գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը սահմանում էր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության հաշվարկման երկու մեթոդների զուգահեռաբար կիրառելիություն, մասնավորապես՝ մաշվածության հաշվարկման ուղիղ գծային մեթոդ՝ մինչև 2014թ. հունվարի 1-ը ձեռքբերված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների համար, և խմբային մեթոդ մաշվածության հաշվարկման տարեկան տոկոսադրույքով՝ վերոհիշյալ ամսաթվից հետո ձեռքբերված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների համար, ապա ներկայումս ՀՀ հարկային օրենսգրքով կիրառելի է միայն մաշվածության հաշվարկման ուղիղ գծային մեթոդը հետևյալ նվազագույն ժամկետներով:

Հիմնական միջոցների խմբերը	Ամորտիզացիոն նվազագույն ժամկետը (տարի)
Շենքեր, շինություններ	20
Հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքեր և շինություններ	10
Արտադրական սարքավորումներ	5
Հոսքային գծեր, ռոբոտատեխնիկա	3
Հաշվողական և համակարգչային տեխնիկա, հաղորդակցական սարքավորանք	1
Այլ հիմնական միջոցներ	8

Շահութահարկ

Ներկայիս կարգավորման համաձայն՝ մինչև 50,000 ՀՀ դրամ (ներառյալ) արժողությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքի չափով ծախսը համախառն եկամտից ամբողջությամբ ենթակա է նվազեցման այդ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման հարկային տարվա ընթացքում:

Միաժամանակ ՀՀ հարկային օրենսգիրքը սահմանում է 2014թ. հունվարի 1-ից հետո ձեռք բերված հիմնական միջոցների/ոչ նյութական ակտիվների մաշվածության և մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերահաշվարկման կարգ, արդյունքում վերահաշվարկված հաշվեկշռային արժեքները դիտարկվելու են որպես տվյալ հիմնական միջոցների/ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեք 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:


մինչև 50,000ՀՀ դրամ
(ներառյալ)


2018թ. հունվարի
1-ի դրությամբ...


2014թ. հունվարի
1-ից հետո ձեռք
բերված ...


Շահութահարկ

Հարկման բազան որոշելիս որոշ ծախսերի նվազեցման սահմանափակումներ

 Շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից ենթակա չեն նվազեցման ֆիզիկական անձանց օգնության, սննդի կազմակերպման, նրանց համար սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպման և համանման այլ ծախսերի այն մասը, որը գերազանցում է տվյալ շահութահարկ վճարողի հարկային տարվա համախառն եկամտի 0.25 տոկոսը:

 Շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող յուրաքանչյուր ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների ընդունման և (կամ) ծառայությունների ստացման գործարքներին վերաբերող ծախսերի այն մասը, որն ամսական կտրվածքով գերազանցում է 3 միլիոն ՀՀ դրամը:

 Շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից ենթակա չեն նվազեցման Հայաստանի Հանրապետության տարածքում գործուղման դեպքում՝ գործուղվողի՝ գործուղման մեջ գտնվելու յուրաքանչյուր օրացուցային օրվա համար օրապահիկի գծով 12,000 ՀՀ դրամը գերազանցող գումարները:

 Շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն ՀԴՄ կտրոնների հիման վրա կատարված ձեռքբերումների ծախսերը, բացառությամբ այն դեպքերի, երբ ՀԴՄ կտրոններում արտացոլված է ծախս կատարող կազմակերպության ՀՎՀՀ-ն: Սույն դրույթը կիրառելի է 2018թ. հուլիսի 01-ից հետո ծագած իարվահարաբերությունների նկատմամբ:

Շահութահարկ

Հարկային հաշվարկների ներկայացման և հարկերի վճարման նոր վերջնաժամկետներ

ՀՀ հարկային օրենսգրքով շահութահարկի հաշվարկի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ, սակայն այս ժամկետը կիրառելի չէ 2017թ. շահութահարկի հաշվարկի ներկայացման համար: Այս դեպքում կիրառելի է նախկինում գործող կարգն, այսինքն՝ այն պետք է ներկայացվի մինչև 2018թ. ապրիլի 15-ը:

Հարկային գործակալների կողմից ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկների ներկայացման հաշվետու ժամանակաշրջան է սահմանվել հարկային տարվա եռամսյակն, իսկ եռամսյակին վերագրելի հաշվարկի ներկայացման ժամկետ՝ մինչև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Հարկ է նշել, որ նախկինում այս հաշվարկը ենթակա էր ներկայացման տարեկան կտրվածքով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տավա փետրվարի 20-ը: Ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտներից հաշվարկված և պահված հարկը պետք է վճարվի մինչև եկամուտների վճարման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:



Շահութահարկ

Շահութահարկ վճարողները պարտավոր են ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ը ներառյալ, կատարել շահութահարկի կանխավճարներ նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսի չափով, եթե տվյալ հարկ վճարողը չի ընտրել շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակը: Անհրաժեշտ է նշել, որ համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթների, որոնք ուժի մեջ էին մինչև 01 հունվար 2018թ. , շահութահարկի կանխավճարները պետք է կատարվեին մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 15-ը ներառյալ նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 18. 75 տոկոսի չափով:

Հարկ է նշել, որ շահութահարկ վճարողները կարող են ընտրել նաև կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակը, եթե մինչև ընթացիկ հարկային տարվա մարտի 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնեն հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն՝ շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակի ընտրության վերաբերյալ:



Կանխավճարների այլընտրանքային մեթոդն ընտրած շահութահարկ վճարողները յուրաքանչյուր եռամսյակի համար շահութահարկի կանխավճարները կատարում են նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների 2 տոկոսի չափով:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ

Եկամտային հարկի նոր դրույքաչափեր

Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի ֆիզիկական անձանց վճարված եկամուտներից եկամտային հարկը պետք է հաշվարկվի հետևյալ դրույքաչափերով, եթե օրենսգրքով եկամտի կոնկրետ տեսակի համար այլ դրույքաչափ նախատեսված չէ.

Ամսական հարկման բազա	Կիրառելի տոկոսադրույք
Մինչև 150,000 դրամ	23%
150,000 դրամից մինչև 2,000,000 դրամ	34,500 դրամ՝ գումարած 150,000 դրամը գերազանցող գումարի 28%-ը
2,000,000 դրամից ավել	552,500 դրամ՝ գումարած 2,000,000 դրամը գերազանցող գումարի 36%-ը



Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ստացած շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով, իսկ ՀՀ քաղաքացիների ստացած շահաբաժինների մասով՝ 5 տոկոս դրույքաչափով:






Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ստացած շահաբաժինների եկամտային հարկով հարկմանը վերաբերող դրույթն ուժի մեջ է մտել 2017թ. հունվարի 1-ից և տարածվում է այդ ամսաթվից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա, իսկ ՀՀ քաղաքացիների ստացած շահաբաժինների եկամտային հարկով հարկմանը վերաբերող դրույթը տարածվում է 2018թ. հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա:



Հարկային գործակալի կողմից հարկ վճարողներին առանց հիմնավորող հաշվարկային փաստաթղթերի վճարվող եկամուտների մասով եկամտային հարկի դրույքաչափը սահմանվել է 20 տոկոս:

Եկամտային հարկ

Հաշվարկների ներկայացման նոր վերջնաժամկետներ և տարեկան տեղեկատվության ներկայացման պահանջ

-  Հարկային գործակալները նոր աշխատողին (բացառությամբ ՀՀ բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) աշխատանքի ընդունելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, հարկային մարմին պետք է ներկայացնեն նոր աշխատողի գրանցման հայտ: Համեմատության համար հարկ է նշել, որ նախկինում գրանցման հայտերը ենթակա էին ներկայացման մինչև աշխատակցին աշխատանքի ընդունելու ամսվան հաջորդող ամսվա 20-ը:
-  Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ հարկային մարմին պետք է ներկայացնեն նախորդ հարկային տարվա ընթացքում միայն պասիվ եկամուտներ ստացած ֆիզիկական անձանց, ինչպես նաև ՀՀ բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, նրանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների:
-  Աշխատակիցների/պայմանագրային աշխատողների ազատման հայտերի մասով ևս տեղի է ունեցել համապատասխան հայտերի ներկայացման ժամկետների կրճատում, մասնավորապես՝ ազատման հայտերն, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդի հայտերը ենթակա են ներկայացման ոչ ուշ, քան համապատասխան հանգամանքն առաջանալու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Ընդհանուր բնույթի փոփոխություններ

Ընդհանուր բնույթի փոփոխություններ

Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տույժի դրույքաչափը սահմանվել է ժամանակին չնուծված հարկի գումարի 0.075 տոկոսի չափով դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար: Նշենք, որ նախկինում հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում էր տույժ՝ 0.15 տոկոսի չափով վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Էլեկտրոնային առևտրի շրջանակներում կատարվող գործարքները կարող են փաստաթղթավորվել վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող փաստաթղթերով կամ այդ կազմակերպությունների կողմից կիրառվող վճարային գործիքների (սարքավորումների) կողմից սպազրվող փաստաթղթերով:



Ընդհանուր բնույթի փոփոխություններ



Ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշվում են՝

- ԵՏՄ անդամ չհամարվող պետությունից ապրանքի ներմուծման/արտահանման գործառնությունների դեպքում՝ ապրանքի ներմուծման կամ ապրանքի արտահանման մաքսային հայտարարագրի գրանցման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,
- ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում՝ ապրանքի ներմուծման կամ ապրանքի արտահանման հարկային հայտարարագրի ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,
- այն դեպքում, երբ ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքի գծով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է գործարքի կողմ հանդիսացող՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ կազմակերպության՝ ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատությունը, ձևավորվող հարկման բազաները և սկզբնական արժեքները որոշվում են համապատասխան հաշվարկային փաստաթղթի դուրս գրման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:



Վերոհիշյալ գործառնությունների իրականացման օրվա համար որպես ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք հիմք է ընդունվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակված միջին փոխարժեքը:

Տրանսֆերային գնագոյացում

Տրանսֆերային գնագոյացում Հիմնական սկզբունքները

Վերահսկվող գործարքներ

Օրենսգրքի համաձայն վերահսկվող են համարվում հետևյալ գործարքները.

- ▶ ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ փոխկապակցված անձանց միջև գործարքները,
- ▶ ՀՀ ռեզիդենտ փոխկապակցված անձանց միջև գործարքները, երբ գործարքի կողմերից առնվազն մեկը հանդիսանում է ռոյալթի (բնօգտագործման վճար) վճարող կամ օգտվում է հարկային արտոնություններից կամ տնտեսական գործունեություն է իրականացնում ազատ տնտեսական գոտում,
- ▶ ՀՀ հարկ վճարող և օֆշորային գոտիներում գրանցված անձանց միջև՝ անկախ փոխկապակցվածության հանգամանքից:

Փոխկապակցված անձինք

Հարկ վճարողներին փոխկապակցված ճանաչելու հիմքերն են՝

- ▶ հարկ վճարողներից մեկն ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս հարկ վճարողի կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) ունի մյուսի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում,
- ▶ միևնույն հարկ վճարողն ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է 2 և ավելի հարկ վճարողների կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) ունի դրանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում:

Տրանսֆերային գնագոյացում Հիմնական սկզբունքները

Պարզած ձեռքի հեռավորության սկզբունք

- ▶ Ըստ օրենսգրքի՝ վերահսկվող գործարքներում ներգրավված հարկվող եկամուտը (շահույթը) և ռոյալթին համապատասխանում է պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, եթե այդ գործարքների պայմանները չեն տարբերվում այն պայմաններից, որոնք կկիրառվեին համադրելի չվերահսկվող գործարքներում:
- ▶ Օրենսգիրքը սահմանում է նաև գործարքների համադրելիությունը պարզելու կարգը:
- ▶ Եթե վերահսկվող գործարքների պայմանները չեն համապատասխանում պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, ապա հարկային մարմինները կարող են կատարել համապատասխան ճշգրտումներ:

Տրանսֆերային գնագոյացման մեթոդները

Օրենսգիրքը սահմանում է հետևյալ տրանսֆերային գնագոյացման մեթոդները.

- 1 Համադրելի չվերահսկվող գնի մեթոդ
- 2 Վերավաճառքի գնի մեթոդ
- 3 «Ծախսումներ պլյուս» մեթոդ
- 4 Զուտ շահույթի մեթոդ
- 5 Հասույթի բաշխման մեթոդ

Հարկ է նշել, որ օրենսգրքով գնագոյացման մեթոդի ընտրության ժամանակ առաջնությունը տրվում է համադրելի չվերահսկվող գնի մեթոդին:

Տրանսֆերային գնագոյացում Հիմնական սկզբունքները

Համապատասխան տրանսֆերային գնագոյացման մեթոդը կիրառելիս համադրելի չվերահսկվող գործարքների նկատմամբ ձևավորվում է համապատասխան ֆինանսական ցուցանիշների տիրույթ (գին, հավելագին, հասույթ կամ շահույթի մասնաբաժին) - պարզած ձեռքի հեռավորության տիրույթ:

Եթե վերահսկվող գործարքի ֆինանսական ցուցանիշը, որը ստացվել է համապատասխան տրանսֆերային գնագոյացման մեթոդի կիրառմամբ, գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթում, ապա վերահսկվող գործարքը ենթակա չէ ճշգրտման: Հակառակ դեպքում հարկային մարմինը կարող է ճշգրտել այն և ցանկացած նման ճշգրտում կլինի պարզած ձեռքի հեռավորության տիրույթի միջին կետ:

Վերահսկվող գործարքների մասին հաշվետվություն

Օրենսգրքով հարկ վճարողների վրա պարտավորություն է դրվում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը վերահսկվող գործարքների մասին հաշվետվություն ներկայացնել լիազոր մարմիններ, եթե նրանց ընդհանուր գումարը հաշվետու տարվա ընթացքում գերազանցում է 200 միլիոն դրամը:

Հարկ վճարողները հարկային մարմնի կողմից գրավոր պահանջը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում պարտավոր են նաև թղթային կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթերը, որոնք ցույց են տալիս վերահսկվող գործարքի (գործարքների) համապատասխանությունը պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին:

Կոնտակտային տվյալներ



**Հակոբ Թադևոսյան
Տնօրեն**

T + 374 (10) 54 51 48

E Hakob.Tadevosyan@am.gt.com



**Արմեն Գալստյան
Բաժնետեր**

T + 374 (10) 54 51 48

E Armen.Galstyan@am.gt.com

Խորհրդատվության համար դիմեք մեզ`



Գրանթ Թորնթոն Լիգալ ընդ Թաքս ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փող.,
1-ին հարկ, թիվ 109 գրասենյակ



Հ.՝ + 374 (10) 54 51 49



Էլ. փոստ՝ legal@am.gt.com

Այս հրապարակման մեջ նկարագրված հարցերը նախատեսված են ընդհանուր ներկայացման և քննարկման համար: Վերջիններս նախատեսված չեն և չպետք է օգտագործվեն որպես ցանկացած կոնկրետ հարցի վերաբերյալ իրավաբանական խորհրդատվություն: